ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն՝ բիզնեսի համար. միավորելով ընկերություններին

Իրականացման ժամանակահատված: 01.01.2020 - 31.12.2023

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 6 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Eurochambres

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: https://twitter.com/EU4BCC, facebook.com/EU4BCC,

Նախագծի կայքէջ: connectingccompanies.eu

Նախագծի նկարագրություն:

«ԵՄ-ն՝ բիզնեսի համար. միավորելով ընկերություններին» ծրագիրը նպատակ ունի խթանել ԵՄ անդամ պետությունների և արևելյան գործընկեր վեց երկրների միջև առևտուրը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով տնտեսական գործունեության հինգ ոլորտների վրա, որոնք ՓՄՁ արտահանման աճի զգալի ներուժ ունեն. օրգանական սնունդ, ստեղծարար արդյունաբերություն, տեքստիլ արդյունաբերություն, զբոսաշրջություն և գինեգործություն:

Ակնկալվող արդյունքներ:

- B2B մեթչինգ. մեկնարկել է հայտամրցույթ, իսկ ամապատասխան ՓՄՁ-ները կընտրվեն Եվրոպական ոլորտային կոնսորցիումի կողմից՝ ԵՄ կանոններին համահունչ համապատասխանության չափանիշների վրա հիմնված թափանցիկ ընթացակարգի միջոցով: Նպատակն է ուսումնասիրել համագործակցության հնարավորությունները՝ աշխատելով ընդհանուր արտադրանքի կամ ծառայության ստեղծման վրա:
- Ուսումնական այցեր. սրանք կտան այլ ԳԱԿ-երից «տեղում» սովորելու հնարավորություն, փոխըմբռնում կստեղծեն արևելյան գործընկեր երկրների և ԵՄ գործարար համայնքի միջև, ինչպես նաև կառաջարկեն կապերի հաստատման հնարավորություններ: Յուրաքանչյուր ուսումնական այց կունենա որոշակի ուղղվածություն, որը կարող է կրել թեմատիկ (օրինակ՝ միջազգայնացման ծառայություններ, կանանց ձեռներեցություն) կամ ոլորտային (օրինակ՝ ագրոպարենային, տեքստիլ) բնույթ:
- Թվինինգ (ԳԱԿ-երի կարողությունների զարգացում / փոխադարձ ուսուցում, քոուչինգ)՝ ԵՄ ԳԱԿ-երի և արևելյան գործընկեր երկրների ԳԱԿ-երի միջև անմիջական կապեր հաստատելու նպատակով: Գաղափարը կայանում է երկու կողմերում առևտրային միջավայրի և ներդրումային հնարավորությունների վերաբերյալ գիտելիքներն ավելացնելու, փոխադարձ փոխանակումների հնարավորություն ստեղծելու, լավագույն պրակտիկաներով և գիտելիքներով կիսվելու, փոխադարձ համագործակցության և գիտելիքների ընդլայնման մեջ:

Նույն գործողության շրջանակում կխրախուսվեն արդյունաբերական տարածքներ, ոլորտում գործող ընկերություններ և ՓՄՁ-ներ, տեղական կլաստերներ և նորարարական կենտրոններ այցելությունները՝ ԳԱԿ-